ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 200- Ա **20 մայիսի 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 38-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հունիսի 12-ի N 51-Ա/1 և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2012 թվականի հունիսի 18-ի N 78-Ա համատեղ հրամանը

որոշում եմ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գրիգորյան Նարեկ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, նախագահ
Վարդանյան Լուսինե	- մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար
Գալոյան Մամիկոն	- մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Մնացականյան Վարդանուշ	- մարզպետարանի ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ
Շահբազյան Հասմիկ	- մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Սաֆարյան Համբարձում	- մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ
Բաղոյան Արմեն	- մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետի պաշտոնակատար
Հովհաննիսյան Նորիկ	- մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ, **քարտուղար**
Գևորգյան Բաղդասար	- մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ
Խլղաթյան Խոսրով	- «Գեղամա աշխարհ» թերթի գլխավոր խմբագիր /համաձայնությամբ/
Գևորգյան Անահիտ	- «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ նախագահ /համաձայնությամբ/
Մոմչյան Կարինե	- «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ նախագահ /համաձայնությամբ/»:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի «Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի հունիսի 17-ի N 52-Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 38-Ա կարգադրությունը:

20.05.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ